ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 փետրվարի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ նորընտիր բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, բյուրոյի անդամներ Ալբերտ Աճեմյանին, Վիգեն Հովսեփյանին, Գերագույն Մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանին և քարտուղար Կիրո Մանոյանին:

Ողջունելով և շնորհավորելով ՀՅԴ ներկայացուցիչներին՝ Մայր Հայրենիքում կուսակցության ընդհանուր ժողովի գումարման և բարեհաջող անցկացման առիթով, Վեհափառ Հայրապետը կարևորեց քաղաքական կուսակցությունների դերը պետական ու ազգային կյանքում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայ Եկեղեցու և ազգի առջև ծառացած մի շարք հարցեր, որոնց թվում Նորին Սրբությունը շեշտեց ԱՊՀ երկրներում հայ համայնքների կազմակերպման, հոգևոր սպասավորների պատրաստման խնդիրները: Կարևորելով Եկեղեցու դերն այս խնդիրների լուծման ասպարեզում՝ ՀՅԴ պատվիրակության անդամներն իրենց զորակցությունն ու նվիրվածությունը հայտնեցին Մայր Եկեղեցուն:

Հանդիպման ավարտին ցանկություն հայտնվեց հաճախակի դարձնել նմանատիպ հանդիպումներն ու քննարկումները, որոնք, Վեհափառ Հայրապետի համոզմամբ, իրենց նպաստավոր արդյունքը կարող են ունենալ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հայաստանի Ազգային Գրադարան
Фундаментальная библиотека